Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անուն, ազգանուն**
   ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Մոնրեալ, Կանադա, 2018 թվականի հոկտեմբերի 5-8

4. **Հրավիրող կողմը**

Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն (International Civil Aviation Organization, ԻԿԱՕ)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Թռիչքային անվտանգության վերաբերյալ գլխավոր տնօրենների ծրագիրը առաջարկվել էր սահմանափակ թվով մասնակցիներին (20 մասնակից): ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահը ծրագրին մասնակցելու նպատակով հորդոր նամակ էր հղել և ստացել էր մասնակցելու հնարավորություն:

Գործադիր մակարդակի այս ծրագիրը տվեց քաղաքացիական ավիացիայի միջազգային անվտանգության և նրա հիմնարար սկզբունքների, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի աջակցմանն ուղղված ազգային ավիացիայի թռիչքային անվտանգության համակարգի զարգացման ուղիներին վերաբերող հատուկ գիտելիքներ: Ստացված գիտելիքները Կոմիտեի նախագահին և իր աշխատակազմին Հայաստանի թռիչքային անվտանգության արդյունավետ կառավարումն ապահովելու նպատակով իրենց պարտականությունների ավելի լավ իրականացման հնարավորություն կտան:

6. **Քննարկված թեմաները**

Մոդուլ I. Միջազգային ավիացիոն անվտանգության շրջանակ

- Չիկագոյի Կոնվենցիայի վերանայում,

- ԻԿԱՕ-ի, կից մարմինների դերը, քաղաքականության և ստանդարտների ձևավորման գործառույթները և գործընթացները, համագործակցությունը,
- ԻԿԱՕ- ի անվտանգության նպատակներն ու ծրագրերը,
- Այլ առանցքային դերեր և դրանց օժանդակությունը անվտանգության հարցերում:

Մոդուլ II. Ազգային ավիացիայի անվտանգության շրջանակ

- Ազգային ավիացիայի անվտանգության շրջանակի վերանայում՝ ներառյալ ավիացիայի և պետության դերերը,
- Իրավական և կանոնակարգող շրջանակները՝ ներառյալ Չիկագոյի Կոնվենցիայի և դրա հավելվածների ներառումը ազգային օրենսդրությունում և կանոնակարգերում,
- Քաղաքացիական ավիացիայի կազմակերպության կանոնակարգող դերերի և գործառույթների կառուցվածքը, ինքնավարությունը և կադրային ռեսուրսների ապահովումը,
- Լիցենզավորման և վերահսկողության պարտականությունները (Լիցենզավորում, հավաստագրում, թույլտվություն և հաստատում, վերահսկողություն, անվտանգություն),
- Պետական անվտանգության ծրագիր (SSP) և անվտանգության կառավարման համակարգեր(SMS),
- Տարածաշրջանային համագործակցություն՝ ներառյալ անվտանգության վերահսկողություն, տարածաշրջանային մոտեցման քաղաքական, ֆինանսական և իրավական մարտահրավերներ, համագործակցության ռեսուրսներ, տարածաշրջանային տարբեր մեխանիզմներ,
- Խմբային քննարկումներ ավիացիոն կառավարման մասով:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Կայացել են հանդիպումներ.

ա) Հորդանանի Թագավորության քաղաքացիական ավիացիայի կարգավորման հանձնաժողովի գլխավոր հանձնակատարի/գլխավոր գործադիր տնօրեն Հայիթամ Միստոյի հետ,

բ) Թուրքիայի քաղաքացիական ավիացիայի գլխավոր տնօրինության, գլխավոր տնօրենի տեղակալ Հեյդար Յալչինի հետ,

գ) ԻԿԱՕ-ի ներկայացուցիչների հետ. Հենրի Գուրջի, ռազմավարական պլանավորման, համակարգող և գործընկերության գրասենյակի ղեկավար, Սթիվեն Քրեյգեր, Օդային նավիգացիա բյուրոյի տնօրեն, Կատալին Ռադու, ավիացիոն անվտանգության և օդային նավիգացիայի բյուրոյի փոխտնօրեն, Դոկտոր Ֆանգ Լյու, գլխավոր քարտուղար:

Ծրագրի մասնակիցների հետ քննարկված հարցերը հետևյալներն են.

ա) ինչպես ապահովել արդյունավետ փոխհարաբերություններ Կառավարության և քաղաքացիական ավիացիոն իշխանությունների միջև (անդրադառնալով Տրանսպորտի նախարարության դերին),

բ) հասկանալ տեխնիկական աշխատողների հետ կապված աշխատավարձերի ցածր մակարդակի որոշման կարևորությունը և այդ հարցի լուծման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը (քննարկելով ինքնուրույն ֆինանսավորվող ինստիտուտ դառնալու հնարավորությունը),

գ) ինչպես համոզվել, որ երկիրը իրավական դաշտում ԻԿԱՕ-ի հետ համահունչ է (ներառելով այն խնդիրները, որոնք առաջանում են, երբ Կառավարությունները պահանջում են թարգմանություններ իրենց լեզվով),

դ) օդերևութաբանության բնագավառում առավելագույն արդյունավետ համագործակցությունը,

ե) ինչպես բարձրացնել ճիշտ մտածելակերպը թռիչքային անվտանգության վերաբերյալ (հաշվի առնելով ընդհանուր առմամբ մշակութային և մարդկային գործոնը):

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- Հորդանանի Թագավորության քաղաքացիական ավիացիայի կարգավորման հանձնաժողովի գլխավոր հանձնակատարի / գլխավոր գործադիր տնօրեն Հայիթամ Միստոյի հետ հանդիպման ընթացքում որոշվել է, որ ՀՀ ՔԱԿ նախագահը հոկտեմբերի վերջին կուղևորվի Հորդանան՝ երկկողմ օդային համաձայնագիր ստորագրելու համար: Ավելին, նրանք համաձայնվել են աջակցել Հորդանանում տեղական ավիաընկերությունների հետ հանդիպումների կազմակերպմանը, որտեղ կորոշվեն Հայաստան ուղիղ չվերթներ իրականացնող պոտենցիալ ավիաուղիները:
- Թուրքիայի քաղաքացիական ավիացիայի գլխավոր տնօրինության, գլխավոր տնօրենի տեղակալ Հեյդար Յալչինի հետ հանդիպման ընթացքում ՀՀ ՔԱԿ նախագահը անդրադարձել է Հայաստանի օդային տարածքով տարանցիկ թռիչքների քանակի ավելացման, ինչպես նաև թուրքական բյուջետային ավիաընկերությունների (մասնավորապես Pegasus Airlines-ի) կողմից դեպի ՀՀ չվերթներ իրականացնելու հնարավորություններին առընչվող խնդիրներին:
- ԻԿԱՕ-ի ներկայացուցիչների հետ հանդիպմանը վերջիններս արտահայտեցին իրենց պատրաստակամությունը.

ա) Հայաստանի համար տնտեսական զարգացման պլանի մշակման հարցում,

բ) Հայաստանի թռիչքային անվտանգության կատարելագործման հարցում,

գ) Կոնկրետ խնդիրների լուծման համար ԻԿԱՕ-ում կոնկրետ (համապատասխան) մարդկանց հետ հաղորդակցվելու հարցում: Բացի այդ, նրանք խնդրեցին թույլտվություն տալ ՔԱԿ նախագահին ԻԿԱՕ-ի կոնֆերանսներում պոտենցիալ բանախոսների ցանկում ներկայացվելու (ավելի շատ կանանց ավիացիոն ընտանիք ներգրավելու) համար:

Սինգապուրի և Թուրքիայի քաղաքացիական ավիացիոն իշխանությունները առաջարկեցին վերապատրաստման հնարավորություններ, ներառյալ հնարավոր կրթաթոշակները:

Մուտքի հնարավորություն տրվեց Քաղաքացիական ավիացիայի ղեկավարների էլեկտրոնային հարթակ՝ հարցերի և լավագույն փորձի փոխանակման համար:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

17.10.2018թ.